ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան .3. հունիսի 2008թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

Նախագահությամբ՝ Զ. Ղուկասյանի

Անդամակցությամբ՝Վ. Հովհաննիսյանի

Կ. Բալայանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Վարդան Մալխասյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Քաղ. Վարդան Մալխասյանը *26.05.2008թ* դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ *վիճարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի* սահմանադրականությունը:

Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27, 28 հոդվածների և 69 հոդվածի 1,2,4,5 կետերի, ինչպես նաև սահմանադրական դատարանի կանոնակարգի պահանջներին: Դիմողը պահպանել է Սահմանադրական դատարան դիմելու օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները և գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը:

Դիմողը միջնորդություն է ներկայացրել իրեն պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ, քանի որ դիմողը գտնվում է ազատազրկման մեջ՝ խնամքին ունենալով երկու անչափահաս երեխա:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 69 հոդվածի 6-րդ կետով՝ Սահմանադրական դատարանի 1-ին կազմը

ՈՐՈՇԵՑ

1. Վարդան Մալխասյանի դիմումը՝ *ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի* սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող կողմ ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին:

2. Վարդան Մալխասյանին ազատել պետական տուրքի վճարումից: